

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՏՈՒԿ
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԸ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՏ
ԿԱՄԱԿՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ
ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿՈՂՄԻՑ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետև՝ անդամ պետություններ,

ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) դրույթներով,

Պայմանագրի 93-րդ հոդվածի և «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» արձանագրության (Պայմանագրի հմ. 28 հավելված), (այսուհետև՝ Արձանագրություն) դրույթների կատարման նպատակով,

գիտակցելով Եվրասիական տնտեսական միության (այսուհետև՝ Միություն) գործունեության և զարգացման, ինչպես նաև արդյունաբերական արտադրության զարգացման համար պայմաններ ստեղծելու կարևորությունը,

անդամ պետությունների կողմից տնտեսության արդյունաբերական հատվածներին պետական աջակցություն ցուցաբերվելու թափանցիկությունն ու կանխատեսելիությունը բարձրացնելու նպատակով,

ձգտելով անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաներ տրամադրելու ոլորտում անդամ պետությունների կողմից իրացվող սուբսիդիաների գնահատմանը վերաբերող մասով թափանցիկ և կանխատեսելի միջավայր ստեղծելու համար պայմաններ ապահովել,

հաշվի առնելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը,

հետևելով Առևտրի համաշխարհային կազմակերպության սկզբունքներին, նորմերին և

կանոններին,

համաձայնեցին հետևյալի մասին.

I. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Կարգավորման առարկան

Սույն Համաձայնագիրը կարգավորում է անդամ պետությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) միջև անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաներ տրամադրելու հետ կապված փոխգործակցության հարցերը, սահմանում է անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրումը Հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու (այսուհետև՝ համաձայնեցում), ինչպես նաև անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաներ տրամադրվելու հետ կապված՝ Հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգը:

Հոդված 2

Պատասխանատու դեպարտամենտը

Հատուկ սուբսիդիաների համաձայնեցման ընթացակարգի և քննության անցկացման հետ կապված գործառույթներն իրականացվում են Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման կողմից, որի իրավասության մեջ մտնում են արդյունաբերական քաղաքականության վարման և արդյունաբերական սուբսիդիաների ապահովման հարցերը (այսուհետև՝ պատասխանատու դեպարտամենտ):

Հոդված 3

Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստները.

նվազագույն սուբսիդիա՝ սուբսիդիա, որն իր փոքր չափերով չի կարող էական ազդեցություն ունենալ Միության շուկայի վրա.

համատեղ նախագիծ՝ անդամ պետությունների մասնակցությամբ նախագիծ, որն ուղղված է արդյունաբերական համագործակցության և կոոպերացիայի խորացմանը և նախատեսում է հետևյալ պայմաններից մեկի կատարումը՝

համատեղ փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարում,

ծեռնարկությունների (արտադրական հոսքագծերի) ստեղծում,

տեխնոլոգիաների նոր տեսակների զարգացում և տեխնոլոգիաների այդ տեսակներին վերաբերող տեղեկատվության տրամադրում,

նորարարական համատեղ ենթակառուցվածքի ձևավորում.

լիազորված մարմին՝ անդամ պետության գործադիր իշխանության մարմին (մարմիններ), որի (որոնց) լիազորությունների մեջ մտնում են սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված հարցերը:

Սույն Համաձայնագրում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են Պայմանագրով և Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

II. Համաձայնեցման ընթացակարգը և Հանձնաժողովի կողմից հատուկ սուբսիդիաների թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին որոշում ընդունելը

Հոդված 4

Հատուկ սուբսիդիաների համաձայնեցման ընթացակարգը

1. Անդամ պետությունը հատուկ սուբսիդիան համաձայնեցնելու նպատակով իրավունք ունի դիմելու Հանձնաժողովին համապատասխան դիմումը սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված կարգով ուղարկելու միջոցով:

2. Հատուկ սուբսիդիաների համաձայնեցումը կատարվում է կամավոր հիմունքով:

3. Համաձայն Արձանագրության 6-րդ կետի՝ Անդամ պետությունները փոխհատուցման միջոցները չեն կիրառում այն սուբսիդիաների նկատմամբ, որոնց տրամադրման ժամկետները, ծավալներն ու պայմանները համաձայնեցվել են Հանձնաժողովի կողմից:

4. Հատուկ սուբսիդիաների համաձայնեցման ընթացակարգը ներառում է.

1) սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածին համապատասխան՝ պատասխանատու դեպարտամենտի կողմից հատուկ սուբսիդիայի վերլուծության (այսուհետև՝ վերլուծություն) անցկացում՝ սույն Համաձայնագրի 10-րդ և 11-րդ հոդվածներով նախատեսված չափանիշներին հատուկ սուբսիդիայի համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը պարզելու նպատակով.

2) սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան՝ խորհրդակցությունների անցկացում.

3) Համաձայնագրի 10-րդ և 11-րդ հոդվածներով նախատեսված չափանիշներին հատուկ սուբսիդիայի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ եզրակացության նախապատրաստում՝ համաձայնեցման արդյունքներով (այսուհետև՝ համաձայնեցման արդյունքներով եզրակացություն):

5. Հատուկ սուբսիդիաների համաձայնեցման ընթացակարգի շրջանակներում պատասխանատու դեպարտամենտի կողմից վերլուծություն անց չի կացվում որոշ անդամ պետությունների հատուկ սուբսիդիա տրամադրելու հետևանքով անդամ պետությունների ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի, ազգային տնտեսության

ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության կամ շահերի կոպիտ ոտնահարման մասով:

6. Հատուկ սուբսիդիաների համաձայնեցման արդյունքներով Հանձնաժողովի կողմից ընդունվում է հատուկ սուբսիդիայի թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին որոշում՝ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան, բացառությամբ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքի:

Հոդված 5

Հատուկ սուբսիդիաների համաձայնեցման մասին անդամ պետությունների դիմումների ուսումնասիրությունը Հանձնաժողովի կողմից

1. Տրամադրման համար նախատեսված կամ տրամադրված հատուկ սուբսիդիայի համաձայնեցումը կատարվում է լիազորված մարմնի կողմից Հանձնաժողով ուղարկվող՝ հատուկ սուբսիդիայի համաձայնեցման մասին դիմումի (այսուհետև՝ համաձայնեցման մասին դիմում) հիման վրա: Պատասխանատու դեպարտամենտն այլ անդամ պետությունների լիազորված մարմիններին տեղեկացնում է Հանձնաժողովում համաձայնեցման մասին դիմումն ստանալու մասին Հանձնաժողովում դրա գրանցման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Համաձայնեցման մասին դիմումի մեջ նշվում է հետևյալ տեղեկությամբ.

1) համաձայնեցման մասին դիմումն ուղարկած լիազորված մարմնի մասին տեղեկություններ.

2) սուբսիդիայի իրացման համար պատասխանատու լիազորված մարմնի (անդամ պետության կողմից լիազորված կառույցի) մասին տեղեկություններ.

3) հատուկ սուբսիդիայի տրամադրումը նախատեսող նորմատիվ իրավական ակտի (նորմատիվ իրավական ակտի նախագծի) մասին տեղեկություններ (վավերապայմանները և անվանումը).

4) սուբսիդիայի հատուկ լինելը հաստատող տեղեկություններ.

5) հատուկ սուբսիդիայի, դրա տրամադրման ձևերի և նպատակների նկարագրությունը.

6) հնարավոր ստացողի և ֆինանսավորման աղբյուրի մասին տեղեկություններ.

7) արդյունաբերության ճյուղի և ապրանքի մասին տեղեկություններ (Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրի նշումով (այսուհետև՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ)):

8) ժամկետը, որով տրամադրվում է հատուկ սուբսիդիան.

9) հատուկ սուբսիդիայի չափը.

10) Միության ներքին շուկայի վրա հատուկ սուբսիդիայի ազդեցության մասին տեղեկություններ:

3. Համաձայնեցման մասին դիմումի ձևը և դրա լրացման կարգը հաստատվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից:

4. Համաձայնեցման մասին դիմումն ուղարկած լիազորված մարմնի կողմից սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները ամբողջ ծավալով ներկայացվելու դեպքում պատասխանատու դեպարտամենտը Հանձնաժողովում համաձայնեցման մասին դիմումի գրանցման օրվանից 10 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում ընդունում է համաձայնեցման ընթացակարգն սկսելու մասին որոշում և համապատասխան ծանուցում է ուղարկում լիազորված մարմիններին:

5. Հատուկ սուբսիդիայի համաձայնեցման ընթացակարգն սկսելու մասին ծանուցումը պետք է պարունակի.

1) համաձայնեցման մասին դիմում ներկայացրած անդամ պետության անվանումը.

2) անդամ պետության վարչատարածքային միավորի մասին տեղեկություններ, որտեղ նախատեսվում է տրամադրել կամ տրամադրվել է հատուկ սուբսիդիան.

3) համաձայնեցման մասին դիմում ուղարկած լիազորված մարմնի անվանումը.

4) հատուկ սուբսիդիայի համառոտ նկարագրությունը, տեղեկություններ դրա տրամադրման նպատակների և հնարավոր ստացողի մասին.

5) հատուկ սուբսիդիայի տրամադրումը նախատեսող նորմատիվ իրավական ակտի (նորմատիվ իրավական ակտի նախագծի) մասին տեղեկություններ (վավերապայմանները և անվանումը).

6) տեղեկություններ արդյունաբերության ճյուղի և ապրանքի մասին (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի նշումով).

7) ժամկետը, որով տրամադրվում է հատուկ սուբսիդիան.

8) հատուկ սուբսիդիայի չափը:

6. Համաձայնեցման մասին դիմում ուղարկած լիազորված մարմնի կողմից սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և տեղեկություններն ամբողջ ծավալով չներկայացվելու դեպքում պատասխանատու դեպարտամենտը Հանձնաժողովում համաձայնեցման մասին դիմումի գրանցման օրվանից 10 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում այդ լիազորված մարմնից պահանջում է բացակայող փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները: Հարցումը համարվում է ստացված լիազորված մարմնի կողմից՝ փոստային կապով այն ուղարկելու օրվանից 7 օրացուցային օր հետո:

Համաձայնեցման մասին դիմում ուղարկած լիազորված մարմինը նշված հարցումն ստանալու օրվանից 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում ներկայացնում է բացակայող փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները:

Այն դեպքում, երբ համաձայնեցման մասին դիմում ուղարկած լիազորված մարմինը չի կարող սահմանված ժամկետում ներկայացնել պատասխանատու դեպարտամենտի կողմից պահանջվող փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, նշված ժամկետը կարող է պատասխանատու դեպարտամենտի կողմից երկարաձգվել 30 օրացուցային օրով՝ այդ լիազորված մարմնի կողմից հիմնավորված և գրավոր շարադրված խնդրանքի դեպքում:

Պատասխանատու դեպարտամենտը Հանձնաժողովում բացակայող փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների գրանցման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է համաձայնեցման ընթացակարգն սկսելու մասին որոշում և այդ մասին ծանուցում է լիազորված մարմիններին:

Բացակայող փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետում կամ, սույն կետի երրորդ պարբերությանը համապատասխան, պատասխանատու դեպարտամենտի կողմից սահմանված ժամկետում լիազորված մարմնի կողմից չներկայացվելը հիմք է դիմումը մերժելու համար: Այդ դեպքում պատասխանատու դեպարտամենտն այդ մասին ծանուցում է համաձայնեցման մասին դիմումն ուղարկած լիազորված մարմնին:

7. Համաձայնեցման մասին դիմումը կարող է հետ վերցվել դիմումն ուղարկած լիազորված մարմնի կողմից՝ մինչև Հանձնաժողովի կոլեգիայի կողմից որոշում ընդունվելը:

Հոդված 6

Հատուկ սուբսիդիայի համաձայնեցման ընթացակարգի անցկացման մերժումը

1. Պատասխանատու դեպարտամենտը մերժում է հատուկ սուբսիդիայի համաձայնեցման ընթացակարգի անցկացումը հետևյալ հիմքերից մեկի առկայության դեպքում.

1) անդամ պետության կողմից համաձայնեցման ընթացակարգի առարկա հանդիսացող հատուկ սուբսիդիայի տրամադրումը հանգեցրել է այլ անդամ պետության ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելուն կամ այլ անդամ պետության ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգին, որոնք ապացուցվել են Արձանագրության V բաժնին կամ սույն Համաձայնագրի IV բաժնին համապատասխան.

2) անդամ պետության կողմից համաձայնեցման ընթացակարգի առարկա հանդիսացող հատուկ սուբսիդիայի տրամադրումը հանգեցրել է անդամ պետություններից որևէ մեկի շահերի կոպիտ ոտնահարմանը, որն ապացուցվել է Արձանագրության V բաժնին կամ սույն Համաձայնագրի IV բաժնին համապատասխան.

3) հատուկ սուբսիդիան, որի համաձայնեցման համար դիմել է լիազորված մարմինը, Արձանագրության V բաժնով նախատեսված ուսումնասիրության կամ սույն Համաձայնագրի IV բաժնով նախատեսված քննության առարկա է:

2. Պատասխանատու դեպարտամենտը Հանձնաժողովում համաձայնեցման մասին դիմումի գրանցման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմումն ուղարկած լիազորված մարմնին և մյուս լիազորված մարմիններին տեղեկացնում է հատուկ սուբսիդիայի համաձայնեցման ընթացակարգի անցկացումը մերժելու մասին (մերժման հիմքի մասին նշումով):

Հոդված 7

Վերլուծություն կատարելը

1. Հատուկ սուբսիդիայի համաձայնեցման ընթացակարգն սկսելու մասին որոշում ընդունելուց հետո պատասխանատու դեպարտամենտը կատարում է վերլուծություն:

Վերլուծություն կատարելու ընթացքում պատասխանատու դեպարտամենտն ապահովում է խորհրդակցությունների անցկացումը՝ սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան:

2. Լիազորված մարմինները կարող են Հանձնաժողով ներկայացնել Հանձնաժողովի կողմից վերլուծություն կատարվելու և հատուկ սուբսիդիայի թույլատրելիության կամ

անթույլատրելիության մասին որոշում ընդունվելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությո՞ւյթ համաձայնեցման ընթացակարգի անցկացման ամբողջ ժամանակահատվածում, այդ թվում՝ պատասխանատու դեպարտամենտի հարցմամբ:

3. Պատասխանատու դեպարտամենտի կողմից վերլուծություն կատարվելու և հատուկ սուբսիդիայի համաձայնեցման արդյունքներով եզրակացություն նախապատրաստվելու ժամկետը 30 աշխատանքային օր է՝ հատուկ սուբսիդիայի համաձայնեցման ընթացակարգը սկսելու մասին ծանուցումը պատասխանատու դեպարտամենտի կողմից լիազորված մարմինների հասցեով ուղարկվելու օրվանից սկսած:

4. Վերլուծության անցկացման արդյունքներով, պատասխանատու դեպարտամենտը նախապատրաստում է եզրակացություն հատուկ սուբսիդիայի համաձայնեցման արդյունքներով (համապատասխան ապացույցների և առաջարկությունների (անհրաժեշտության դեպքում) շարադրմամբ) հատուկ սուբսիդիայի տրամադրումը նախատեսող նորմատիվ իրավական ակտի (նորմատիվ իրավական ակտի նախագծի) առնչությամբ:

Հոդված 8

Խորհրդակցությունների անցկացումը

1. Հատուկ սուբսիդիաների համաձայնեցման շրջանակներում լիազորված մարմինն իրավունք ունի Հանձնաժողովի հարթակում նախաձեռնելու խորհրդակցությունների անցկացում Հանձնաժողով համապատասխան առաջարկ ուղարկելու միջոցով: Պատասխանատու դեպարտամենտն այդ մասին տեղեկացնում է այլ անդամ պետությունների լիազորված մարմիններին և ապահովում է խորհրդակցությունների անցկացումը:

2. Խորհրդակցություններին դիմումատու պետության լիազորված մարմնի ներկայացուցչի բացակայության դեպքում խորհրդակցությունները անց չեն կացվում:

Խորհրդակցություններին այլ անդամ պետությունների լիազորված մարմինների՝ խորհրդակցությունների անցկացման օրվա, տեղի և ժամանակի մասին տեղեկացված ներկայացուցիչների բացակայությունը խորհրդակցությունների անցկացման համար խոչընդոտ չէ:

3. Լիազորված մարմինների ներկայացուցիչները խորհրդակցությունների անցկացման ընթացքում կարող են ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների դիրքորոշումը հաստատող լրացուցիչ տեղեկություն և

պարզաբանումներ:

Լիազորված մարմնի կարծիքը կցվում է խորհրդակցությունների արձանագրությանը (խորհրդակցությունների անցկացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում այն Հանձնաժողով ներկայացնելու դեպքում):

4. Խորհրդակցությունների արձանագրությունն ստորագրվում է պատասխանատու դեպարտամենտի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կողմից և խորհրդակցությունների անցկացման օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է լիազորված մարմիններին:

Հոդված 9

Հատուկ սուբսիդիայի թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին որոշում ընդունելը

1. Հատուկ սուբսիդիայի թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կոլեգիայի կողմից՝ հատուկ սուբսիդիայի համաձայնեցման արդյունքներով եզրակացության հիման վրա:

2. Այն դեպքում, երբ հատուկ սուբսիդիան համապատասխանում է սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված չափանիշներին, Հանձնաժողովի կոլեգիայի կողմից ընդունվում է հատուկ սուբսիդիայի անթույլատրելիության մասին որոշում:

3. Այն դեպքում, երբ հատուկ սուբսիդիան չի համապատասխանում սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված չափանիշներին և համապատասխանում է սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված չափանիշներից որևէ մեկին կամ մի քանիսին, Հանձնաժողովի կոլեգիան ընդունում է հատուկ սուբսիդիայի թույլատրելիության մասին որոշում:

4. Այն դեպքում, երբ հատուկ սուբսիդիան չի համապատասխանում սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված չափանիշներին և սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված չափանիշներից ոչ մեկին, Հանձնաժողովի կոլեգիայի՝ արդյունաբերության հարցերով համակարգող անդամն այդ մասին զեկուցում է Հանձնաժողովի կոլեգիայի նիստի ժամանակ, և այդպիսի սուբսիդիայի թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին որոշում չի ընդունվում:

Տվյալ դեպքում՝ դիմումն ուղարկած լիազորված մարմնի գրավոր դիմումի առկայության դեպքում, պատասխանատու դեպարտամենտը կատարում է վերլուծություն այդպիսի

հատուկ սուբսիդիայի տրամադրման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության մասով:

Սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված վերլուծության կատարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

5. Սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված վերլուծության արդյունքներով հատուկ սուբսիդիայի թույլատրելիության կամ անթույլատրելիության այլ չափանիշների հաստատման հարցը, որի համաձայն Հանձնաժողովի կոլեգիան ընդունում է սույն հոդվածի 4-րդ կետում նշված հատուկ սուբսիդիայի թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին որոշումը, սահմանված կարգով քննարկման է ներկայացվում Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստում:

III. Հատուկ սուբսիդիայի թույլատրելիությունը կամ անթույլատրելիությունը

Հոդված 10

Հատուկ սուբսիդիայի անթույլատրելիության չափանիշները

1. Հատուկ սուբսիդիայի անթույլատրելիության չափանիշ է հատուկ սուբսիդիայի տրամադրում նախատեսող նորմատիվ իրավական ակտում (նորմատիվ իրավական ակտի նախագծում) դրույթների առկայություն, որոնք վկայում են Արձանագրության 9-րդ, 11-րդ և 14-րդ կետերով սահմանված արգելված սուբսիդիաների առկայության մասին:

2. Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից կարող են սահմանվել հատուկ սուբսիդիաների անթույլատրելիության այլ չափանիշներ:

Հոդված 11

Հատուկ սուբսիդիայի թույլատրելիության չափանիշները

1. Հատուկ սուբսիդիան թույլատրելի է, եթե այն համապատասխանում է հետևյալ չափանիշներից մեկին կամ մի քանիսին.

1) հատուկ սուբսիդիան նվազագույն է (մեկ ստացողի (ձեռնարկության) հաշվով 100 հազ. դոլարի չափով).

2) հատուկ սուբսիդիան ուղղված է համատեղ նախագծի իրագործմանը, այդ թվում՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող, Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների

համապատասխան: Այդպիսի համատեղ նախագծերը պետք է ուղղված լինեն այնպիսի արտադրանքի արտադրությանը, որը Միության մաքսային տարածքում չի արտադրվում կամ արտադրվում է ոչ բավարար քանակությամբ.

3) հատուկ սուբսիդիան ուղղված է գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական, այդ թվում՝ համատեղ աշխատանքների անցկացմանը՝ բարձր տեխնոլոգիական արտադրությունների խթանման նպատակով.

4) հատուկ սուբսիդիան ուղղված է նորարարական գործունեությանը.

5) հատուկ սուբսիդիան ուղղված է Միության մաքսային տարածքում նմանատիպ տեսակներ չունեցող արդյունաբերական ապրանքի արտադրությանը.

6) հատուկ սուբսիդիան ուղղված է արդյունաբերական այն ապրանքի (որի ծածկագիրը սահմանված է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի 10 նիշի մակարդակով) արտադրությանը, որը Միության մաքսային տարածքում արտադրվում է ոչ բավարար քանակությամբ.

7) հատուկ սուբսիդիան ուղղված է տարերային աղետների կամ որևէ այլ արտակարգ պատահարի հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցմանը՝ այն չափով, որն անհրաժեշտ է պատճառված վնասը վերացնելու համար.

8) հատուկ սուբսիդիան ուղղված է ձեռնարկություններին օգնություն ցուցաբերելուն՝ խորհրդատվական ծառայությունների, առևտրային տոնավաճառներում մասնակցության կազմակերպման հարցերով ծառայությունների, հիմնարար հետազոտությունների անցկացման (այդ թվում՝ մեծամասշտաբ), կիրառական արդյունաբերական մշակումների իրականացման (դրանց արժեքի մինչև 70 տոկոսը), արդյունաբերական սեփականության լիցենզիաներ և իրավունքներ ստանալու համար կատարված ծախսերի (այն չափով, որը հավասար է գիտահետազոտական աշխատանքների անցկացման ծախսերին, որոնց արդյունքը եղել է այդպիսի իրավունքներ ստանալը) դիմաց դրանց արժեքի կեսի չափով վճարման մասով:

Այդպիսի ձեռնարկությունների աշխատողների միջին թիվը սահմանվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից.

9) հատուկ սուբսիդիան ուղղված է ձեռնարկությունների աշխատակիցների մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացման հարցում օգնության ցուցաբերմանը: Այն ծրագրերի սուբսիդավորումը, որոնց նպատակը ձեռնարկությունների աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության ընդհանուր մակարդակը

բարձրացնելն է, սահմանվում է դրանց արժեքի 50 տոկոսի սահմաններում՝ այն ձեռնարկությունների համար, որոնց աշխատողների միջին թիվը նախորդ օրացուցային տարվա կտրվածքով գերազանցում է 250-ը, և 70 տոկոսի սահմաններում՝ այն ձեռնարկությունների համար, որոնց աշխատողների միջին թիվը նախորդ օրացուցային տարվա կտրվածքով չի գերազանցում 250-ը.

10) հատուկ սուբսիդիան ուղղված է ոչ կայուն կամ ճգնաժամային ֆինանսական վիճակում գտնվող և վերակազմավորվող ձեռնարկություններին օգնություն ցուցաբերելուն:

Թույլատրվում է սուբսիդավորել այն ձեռնարկությունները, որոնք ապացուցել են, որ գտնվում են ոչ կայուն կամ ճգնաժամային ֆինանսական վիճակում:

Ոչ կայուն ֆինանսական վիճակը բնութագրվում է ֆինանսական կարգապահության խախտմամբ (աշխատանքի վարձատրության ուշացում, պահուստային ֆոնդից դրամական միջոցների օգտագործում և այլն), ձեռնարկության հաշվարկային հաշիվներին դրամական միջոցների մուտքի և վճարումների ընդհատումներով, հասույթի, շահույթի անկանոն մուտքով:

Ճգնաժամային ֆինանսական վիճակը բնորոշվում է սույն ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված անկայուն վիճակի նշանների հետ մեկտեղ՝ կանոնավոր կերպով չկատարվող վճարումների (բանկերի ժամկետանց փոխատվությունների, ապրանքանյութական արժեքների մատակարարների նկատմամբ ունեցած պարտքերի, բյուջեներ և արտաբյուջետային ֆոնդերին կատարվող վճարների գծով ապառքների) առկայությամբ:

Կազմակերպությունները կարող են ֆինանսական կայունության վերականգնման և վերակազմավորման համար ստանալ սուբսիդիաներ իրենց պետական գրանցման օրվանից 3 տարին լրանալուց հետո:

Վերակազմավորման գործում ձեռնարկության սեփական ֆինանսական ներդրումը պետք է կազմի 25 տոկոսից ոչ պակաս, եթե Հանձնաժողովի խորհրդի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Այդպիսի սուբսիդիան կարող է համաձայնեցվել այն ժամկետով, որը ձեռնարկության անհրաժեշտ կլինի ճգնաժամային վիճակից կայուն վիճակի անցնելու համար, սակայն 5 տարուց ոչ ավելի.

11) հատուկ սուբսիդիան տրամադրվում է այն նպատակներով և պայմաններով, որոնք

նախատեսված են Արձանագրության VII բաժնով.

12) հատուկ սուբսիդիան ուղղված է ձևավորման նախնական փուլում գտնվող ձեռնարկություններին օգնության ցուցաբերմանը, եթե սուբսիդավորման մակարդակը չի գերազանցում կապիտալ ներդրումների ընդհանուր գումարի 30 տոկոսը.

13) հատուկ սուբսիդիան ուղղված է օգնության ցուցաբերմանը՝ գոյություն ունեցող արտադրական հզորությունները Միության ստանդարտներին հարմարեցնելու նպատակով՝

արտադրանքի փորձարկումների իրականացման համար կատարված ծախսերի փոխհատուցումը՝ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրա համապատասխանության գնահատումը կատարելու նպատակով,

փորձարկման լաբորատորիաների կառուցման և արդիականացման համար կատարված ծախսերի փոխհատուցում,

14) հատուկ սուբսիդիան ուղղված է օգնության ցուցաբերմանը՝ համապատասխան միջազգային ստանդարտներին կամ դրանց հիման վրա ընդունված, համապատասխան միջազգային ստանդարտների հետ նույնական միջպետական ստանդարտներին արդյունաբերական արտադրանքի համապատասխանությունն ապահովելու նպատակով.

15) հատուկ սուբսիդիան տրամադրվում է այն արդյունաբերական ապրանքի առնչությամբ, որը ճանաչվել է անդամ պետությունների կողմից համատեղ արտադրված՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 1-4-րդ, 6-10-րդ, 12-րդ և 15-րդ ենթակետերում նշված չափանիշների կիրառման պայմանները սահմանվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից:

3. Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից կարող են սահմանվել հատուկ սուբսիդիաների թույլատրելիության այլ չափանիշներ:

Հոդված 12

Տեղեկույթ ստանալու կարգը

1. Հանձնաժողովը, Պայմանագրի 93-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան, կատարում է անդամ պետությունների օրենսդրության մոնիտորինգ ու համեմատական-իրավական վերլուծության անցկացումը՝ սուբսիդիաների տրամադրման առնչությամբ Պայմանագրի դրույթներին համապատասխանության մասով:

2. Սուբսիդիաների տրամադրման առնչությամբ Պայմանագրի դրույթներին

համապատասխանության մասով անդամ պետությունների օրենսդրության մոնիտորինգն ու համեմատական-իրավական վերլուծության անցկացումը կատարելու նպատակով լիազորված մարմինները՝

ամեն տարի՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ից ոչ ուշ, Հանձնաժողով են ներկայացնում Հանձնաժողովի հետ համաձայնեցված՝ տրամադրված հատուկ սուբսիդիաների մասին ծանուցում.

եռամսյա պարբերականությամբ՝ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 30-ից ոչ ուշ, Հանձնաժողով և մեկը մյուսին են ուղարկում հաշվետու եռամսյակում ընդունված այն նորմատիվ իրավական ակտերը, որոնցով նախատեսվում է հատուկ սուբսիդիաների տրամադրումը.

միջգերատեսչական համաձայնեցում իրականացնելուց հետո պարտադիր տեղեկացման կարգով Հանձնաժողով և մեկը մյուսին են ուղարկում այն նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոնցով նախատեսվում է հատուկ սուբսիդիաների տրամադրումը Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող հիմնական ուղղություններին համապատասխան զգայուն ապրանքների շարքին դասվող ապրանքներ արտադրողներին:

Բաց աղբյուրներում հրապարակված նորմատիվ իրավական ակտերի մասով լիազորված մարմինները Հանձնաժողով են ուղարկում այդ ակտերի վավերապայմաններն ու հրապարակման աղբյուրները պարունակող տեղեկություն:

Հատուկ սուբսիդիաների տրամադրում նախատեսող այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք հրապարակված չեն բաց աղբյուրներում, լիազորված մարմինների կողմից ուղարկվում են Հանձնաժողով:

3. Հանձնաժողովը սահմանված կարգով անցկացնում է անդամ պետությունների՝ հատուկ սուբսիդիաների տրամադրում նախատեսող նորմատիվ իրավական ակտերի համեմատական-իրավական վերլուծություն՝ Պայմանագրի 93-րդ հոդվածին և Արձանագրությանը դրանց համապատասխանության մասով:

4. Հանձնաժողովի հետ համաձայնեցված հատուկ սուբսիդիան անդամ պետության կողմից հաշվետու ժամանակաշրջանում չտրամադրվելու փաստի բացահայտման դեպքում պատասխանատու դեպարտամենտն այդ մասին ծանուցում է անդամ պետություններին:

5. Անդամ պետությունն իրավունք ունի դիմելու Հանձնաժողով՝ դիմող անդամ պետության՝ սուբսիդիաների տրամադրում նախատեսող նորմատիվ իրավական ակտերի կամ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ Պայմանագրի 93-րդ հոդվածին և Արձանագրությանը դրանց համապատասխանության մասով համեմատական-իրավական վերլուծությունը Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով անցկացնելու առաջարկով:

6. Սույն հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված ծանուցման մեջ նշվում է հետևյալ տեղեկությունը.

1) Հանձնաժողովի կոլեգիայի՝ հատուկ սուբսիդիայի թույլատրելիության մասին որոշման վավերապայմանները.

2) այն չափանիշները, որոնց հիման վրա համաձայնեցվել է հատուկ սուբսիդիան.

3) այն նորմատիվ իրավական ակտի անվանումը, որին համապատասխան տրամադրվել է հատուկ սուբսիդիան.

4) այն ժամանակահատվածը, որի ընթացքում տրամադրվում են տեղեկությունները.

5) հատուկ սուբսիդիայի ձևի և դրա տրամադրման նպատակների նկարագրությունը.

6) հատուկ սուբսիդիան ստացողի և դրա տրամադրման եղանակի մասին տեղեկությունը.

7) չափը և այն ժամկետը, որով տրամադրվում է հատուկ սուբսիդիան:

7. Հանձնաժողովի հետ համաձայնեցված հատուկ սուբսիդիաների տրամադրման մասին ծանուցման ձևը, ինչպես նաև դրա լրացման կարգը հաստատվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից:

IV. Քննությունների անցկացում

Հոդված 13

Քննություն սկսելու հիմքերը

Անդամ պետությունը կարող է դիմել Հանձնաժողով քննություն սկսելու վերաբերյալ դիմումով՝ հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

այլ անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիայի տրամադրման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու.

այլ անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիայի տրամադրման հետևանքով

ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի.

այլ անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիայի տրամադրման հետևանքով անդամ պետության շահերի կոպիտ ոտնահարման:

Հոդված 14

Քննություն սկսելու մասին որոշում ընդունելը

1. Սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածում նշված քննությունը Հանձնաժողովի կողմից կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի՝ գաղտնի կամ ոչ գաղտնի տարբերակներով (եթե դիմումը պարունակում է գաղտնի տեղեկություն) Հանձնաժողով ներկայացրած՝ քննություն սկսելու վերաբերյալ դիմումի հիման վրա (այսուհետև՝ քննություն սկսելու մասին դիմում):

2. Քննություն սկսելու մասին դիմումի մեջ նշվում է հետևյալ տեղեկույթը.

1) դիմումատու պետության լիազորված մարմնի անվանումը.

2) սուբսիդավորվող ապրանքի անվանումը և նկարագրությունը.

3) այն նորմատիվ իրավական ակտերի ցանկը, որոնց հիման վրա տրամադրվում է հատուկ սուբսիդիան.

4) տեղեկություններ հատուկ սուբսիդիայի բնույթի և չափի վերաբերյալ.

5) տեղեկություններ սուբսիդավորվող ապրանքն արտադրողների վերաբերյալ.

6) տեղեկություններ նույնանման ապրանքի ազգային արտադրողների վերաբերյալ.

7) տեղեկություններ դիմումատու պետության տարածք սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ծավալի փոփոխության վերաբերյալ՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 3 օրացուցային տարվա ժամանակահատվածի համար.

8) տեղեկություններ դիմումատու պետության տարածքից այլ անդամ պետությունների տարածքներ նույնանման ապրանքի արտահանման ծավալների փոփոխության վերաբերյալ՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 3 օրացուցային տարվա ժամանակահատվածի համար.

9) տեղեկություններ՝ դիմումատու պետության տարածքում ապրանքի արտադրություն լինելու և դրա ծավալի (քանակական և գնային արտահայտությամբ)

վերաբերյալ՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 3 օրացուցային տարվա ժամանակահատվածի համար.

10) տեղեկություններ այլ անդամ պետությունների տարածքներում նույնանման ապրանքի արտադրություն լինելու վերաբերյալ՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 3 օրացուցային տարվա ժամանակահատվածի համար.

11) ապացույցներ այլ անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիա տրամադրվելու հետևանքով անդամ պետության ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի, ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի կամ անդամ պետության շահերի կոպիտ ոտնահարման մասին.

12) տեղեկություններ Միության մաքսային տարածք նույնանման ապրանքի ներմուծման ծավալի փոփոխության վերաբերյալ՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 3 օրացուցային տարվա ժամանակահատվածի համար.

13) տեղեկություններ Միության մաքսային տարածքից նույնանման ապրանքի արտահանման ծավալի (քանակական և գնային արտահայտությամբ) փոփոխության վերաբերյալ՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 3 օրացուցային տարվա ժամանակահատվածի համար.

14) այլ գործոններ, որոնք վերլուծվող ժամանակահատվածում կարող էին ազդեցություն ունենալ ազգային տնտեսության ճյուղի վրա.

15) դիմումատու պետության լիազորված մարմնի՝ քննություն սկսելու համար հիմք հանդիսացող եզրահանգումները:

3. Քննություն սկսելու մասին դիմումի մեջ ներկայացված տեղեկությունները պետք է զուգակցվեն դրանց ստացման աղբյուրին հղումով:

4. Քննություն սկսելու մասին դիմումի ձևը, ինչպես նաև դրա լրացման կարգը հաստատվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից:

5. Քննություն սկսելու մասին դիմումի մեջ պարունակվող արժեքային ցուցանիշները նշելիս՝ համադրելիության նպատակով կիրառվում է Հանձնաժողովի կողմից՝ անդամ պետությունների արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրությունը վարելու համար սահմանված դրամական միավորը:

6. Քննություն սկսելու մասին դիմումը ներկայացնելու օր է համարվում

Հանձնաժողովում դրա գրանցելու օրը:

7. Քննություն սկսելու մասին դիմումը Հանձնաժողովում գրանցելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու դեպարտամենտն այդպիսի դիմում ստանալու մասին գրավոր ծանուցում է այն անդամ պետության լիազորված մարմնին, որի տարածքում տրամադրվում է հատուկ սուբսիդիան:

8. Պատասխանատու դեպարտամենտն ուսումնասիրում է, թե արդյո՞ք քննություն սկսելու մասին դիմումի մեջ պարունակվող ապացույցները և տեղեկությունները բավարար են:

Դիմումատու պետության լիազորված մարմնի կողմից սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկությունների ամբողջ ցանկը չներկայացվելու դեպքում պատասխանատու դեպարտամենտն իրավունք ունի քննություն սկսելու մասին դիմումը Հանձնաժողովում գրանցելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում պահանջելու բացակայող նյութերն ու տեղեկությունները:

Բացակայող նյութերն ու տեղեկությունները ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը համարվում է ստացված դիմումատու պետության լիազորված մարմնի կողմից՝ փոստով այն ուղարկելու օրվանից 7 օրացուցային օր հետո:

Դիմումատու պետության լիազորված մարմինը նշված պահանջը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում ներկայացնում է բացակայող տեղեկությունները:

9. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկությունները չներկայացնելը կամ ոչ ամբողջ ծավալով ներկայացնելը քննություն սկսելու մասին դիմումը մերժելու հիմք է, ինչի մասին դիմումատու պետության լիազորված մարմինը և սուբսիդավորող անդամ պետության լիազորված մարմինը ծանուցվում են պատասխանատու դեպարտամենտի կողմից՝ այդպիսի որոշում ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում:

Քննություն սկսելու մասին դիմումը մերժելու մասին որոշումը պատասխանատու դեպարտամենտի կողմից ընդունվում է դիմումի գրանցման օրվանից 45 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում:

10. Քննություն անցկացնելը մերժելու մասին որոշումն ընդունվում է այն դեպքում, երբ քննություն սկսելու մասին դիմումի ուսումնասիրման արդյունքում հայտնաբերվում է, որ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկությունները չեն վկայում այլ անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիա տրամադրվելու հետևանքով անդամ պետության

ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի, ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի կամ անդամ պետության շահերի կոպիտ ոտնահարման մասին:

Քննություն անցկացնելը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում պատասխանատու դեպարտամենտը ոչ ուշ, քան այդպիսի որոշում ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, քննություն անցկացնելը մերժելու պատճառի մասին գրավոր ծանուցում է դիմումատու պետության լիազորված մարմնին և սուբսիդավորող անդամ պետության լիազորված մարմնին:

11. Քննություն սկսելու կամ այն անցկացնելը մերժելու մասին որոշումը պատասխանատու դեպարտամենտի կողմից ընդունվում է Հանձնաժողովում դիմումի գրանցման օրվանից 45 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում:

Հոդված 15

Քննության անցկացումը

1. Քննություն սկսելու մասին որոշում ընդունելու դեպքում Հանձնաժողովն այդպիսի որոշում ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն Հանաձայնագրի 17-րդ հոդվածով նախատեսված ծանուցումն ուղարկում է լիազորված մարմինների հասցեներով:

2. Պատասխանատու դեպարտամենտը քննություն սկսելու մասին որոշում ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում սուբսիդավորող անդամ պետության լիազորված մարմնին է ուղարկում քննություն սկսելու մասին դիմումի պատճենը կամ դրա ոչ գաղտնի տարբերակը (այն դեպքում, երբ դիմումը պարունակում է գաղտնի տեղեկույթ):

Շահագրգիռ անդամ պետության հարցման հիման վրա պատասխանատու դեպարտամենտը նրան տրամադրում է քննություն սկսելու մասին դիմումի պատճենը կամ դրա ոչ գաղտնի տարբերակը (այն դեպքում, երբ դիմումը պարունակում է գաղտնի տեղեկույթ):

3. Քննություն սկսելու մասին դիմումը կարող է հետ կանչվել դիմումատու պետության կողմից՝ նախքան քննությունն սկսելը կամ դրա անցկացման ընթացքում:

Քննություն սկսելու մասին դիմումը համարվում է չներկայացված, եթե այն հետ է վերցվում նախքան քննությունն սկսելը:

Այն դեպքում, երբ քննություն սկսելու մասին դիմումը հետ է վերցվում քննության

անցկացման ընթացքում, քննությունը դադարեցվում է՝ Հանձնաժողովում դիմումատու պետության կողմից քննություն սկսելու մասին դիմումը հետ վերցնելու խնդրանքը գրանցելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազորված մարմիններին Հանձնաժողովի կողմից դրա մասին ծանուցելով:

4. Քննության անցկացման ժամկետը չպետք է գերազանցի 9 ամիսը՝ հաշված քննություն սկսելու մասին որոշում ընդունելու օրվանից:

5. Հանձնաժողովը քննությունն ավարտելու արդյունքներով լիազորված մարմինների հասցեներով ուղարկում է քննությունն ավարտելու մասին ծանուցում՝ կցելով սույն Համաձայնագրի 21-րդ հոդվածով նախատեսված եզրակացությունը:

Ծանուցման օրը համարվում է քննությունն ավարտելու օրը:

Հոդված 16

Խորհրդակցությունների անցկացումը քննության ընթացակարգի շրջանակներում

1. Նախքան քննություն սկսելու մասին որոշում ընդունելը, ինչպես նաև քննության ամբողջ ընթացքում Հանձնաժողովի կողմից, ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ դիմումատու պետության լիազորված մարմնի կամ սուբսիդավորող անդամ պետության լիազորված մարմնի առաջարկով, Հանձնաժողովի հարթակում կարող են անցկացվել խորհրդակցություններ՝ փաստական հանգամանքները հստակեցնելու կամ փոխադարձաբար ընդունելի որոշման հասնելու նպատակով:

2. Պատասխանատու դեպարտամենտը լիազորված մարմիններին տեղեկացնում է խորհրդակցությունների անցկացման մասին և ապահովում դրանց անցկացումը:

3. Խորհրդակցությունների ժամանակ դիմումատու պետության լիազորված մարմնի և (կամ) սուբսիդավորող անդամ պետության լիազորված մարմնի ներկայացուցչի բացակայության դեպքում խորհրդակցությունները անց չեն կացվում:

Խորհրդակցությունների ժամանակ այլ անդամ պետությունների լիազորված մարմինների՝ խորհրդակցությունների անցկացման օրվա, տեղի և ժամանակի մասին տեղեկացված ներկայացուցիչների բացակայությունը խորհրդակցությունների անցկացման համար խոչընդոտ չէ:

4. Լիազորված մարմինների ներկայացուցիչները խորհրդակցությունների ընթացքում կարող են ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ լիազորված մարմնի դիրքորոշումը հաստատող լրացուցիչ տեղեկություն և պարզաբանումներ:

Խորհրդակցությունների արդյունքներով, լիազորված մարմնի՝ Հանձնաժողով ներկայացված կարծիքը խորհրդակցության անցկացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, կցվում է խորհրդակցությունների արձանագրությանը:

5. Խորհրդակցությունների արձանագրությունն ստորագրվում է պատասխանատու դեպարտամենտի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կողմից և ուղարկվում լիազորված մարմիններին ոչ ուշ, քան խորհրդակցությունների անցկացման օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 17

Քննություն անցկացնելու մասին ծանուցումը

Քննության անցկացումն սկսելու մասին ծանուցումը պետք է պարունակի.

դիմումատու պետության լիազորված մարմնի անվանումը.

ապրանքի անվանումը և նկարագրությունը (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի նշումով).

քննություն անցկացնելու հարցով Հանձնաժողով դիմելու հիմնավորումների հակիրճ շարադրանքը.

այն էլեկտրոնային հասցեն, որով այլ անդամ պետությունների լիազորված մարմինները կարող են ուղարկել քննության վերաբերյալ իրենց մեկնաբանություններն ու տեղեկույթը:

Հոդված 18

Քննության ընթացքում տեղեկություն հավաքելը

1. Քննություն սկսելու մասին որոշում ընդունելուց հետո պատասխանատու դեպարտամենտը սուբսիդավորող անդամ պետության լիազորված մարմնին և դիմումատու պետության լիազորված մարմնին ուղարկում է հարցերի ցանկ (սույն հոդվածում այսուհետև՝ հարցերի ցանկ):

Հանձնաժողովի հարցման հիման վրա հարցերի ցանկը լիազորված մարմնի կողմից ուղարկվում է սուբսիդավորվող ապրանքը կամ նույնանման ապրանքն արտադրողներին (համաձայն Հանձնաժողովի կողմից կազմված արտադրողների ցանկի):

Հարցերի ցանկը համարվում է ստացված լիազորված մարմնի կողմից՝ փոստային կապով այն ուղարկելու օրվանից 7 օրացուցային օր հետո:

2. Դիմումատու պետության և սուբսիդավորող անդամ պետության այն լիազորված մարմինները, որոնց ուղարկվել է հարցերի ցանկը, պատասխանները ներկայացնում են Հանձնաժողով հարցերի ցանկն ստանալու օրվանից 45 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում:

Դիմումատու պետության և սուբսիդավորող անդամ պետության այն լիազորված մարմինները, որոնց ուղարկվել է հարցերի ցանկը, ապահովում են սուբսիդավորվող ապրանքը կամ նույնանման ապրանքն արտադրողների պատասխանները Հանձնաժողով ներկայացնելը հարցերի ցանկն ստանալու օրվանից 60 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում:

Լիազորված մարմինների կողմից հարցերի ցանկի առանձին կետերի վերաբերյալ տեղեկություն ներկայացվելու անհնարինության դեպքում Հանձնաժողով է ուղարկվում համապատասխան հիմնավորումը:

3. Հանձնաժողովը հարցերի ցանկի առանձին կետերի վերաբերյալ պատասխաններ ստանալուց հետո կարող է հարցում ուղարկել լիազորված մարմիններին՝ քննություն անցկացնելու համար անհրաժեշտ տեղեկությունը ճշտելու կամ լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով: Նշված տեղեկությունը, այդ թվում՝ սուբսիդավորվող ապրանքը կամ նույնանման ապրանքն արտադրողների կողմից ստացված տեղեկությունը դիմումատու պետության և սուբսիդավորող անդամ պետության լիազորված մարմինների կողմից ներկայացվելու ժամկետը չի կարող գերազանցել Հանձնաժողովի հարցումը նրանց ստանալու օրվանից 15 օրացուցային օրը:

4. Տեղեկությունը Հանձնաժողով է ներկայացվում ռուսերենով: Անդամ պետության պետական լեզվով կազմված փաստաթղթերը զուգակցվում են ռուսերեն թարգմանությամբ:

5. Քննություն անցկացնելու ընթացքում Հանձնաժողովն իրավունք ունի քննություն անցկացնելու համար անհրաժեշտ տեղեկություն ներկայացնելու վերաբերյալ հարցում ուղարկելու դիմումատու պետության և սուբսիդավորող անդամ պետության պետական իշխանության մարմիններին:

Դիմումատու պետության և սուբսիդավորող անդամ պետության պետական իշխանության մարմինները քննություն անցկացնելու համար անհրաժեշտ տեղեկությունը Հանձնաժողով են ուղարկում Հանձնաժողովի հարցումն իրենց ստանալու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

Հոդված 19

Շահագրգիռ անդամ պետությունների մասնակցությունը քննությանը

1. Այլ անդամ պետությունների լիազորված մարմիններն իրավունք ունեն քննություն սկսելու մասին որոշումն ընդունելու օրվանից 15 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու դիմում քննությանը որպես շահագրգիռ կողմ (այսուհետև՝ շահագրգիռ կողմ) մասնակցելու մտադրության վերաբերյալ:

Շահագրգիռ կողմը քննության հետ կապված մեկնաբանությունները և տեղեկությունը Հանձնաժողովին է ներկայացնում Հանձնաժողովի կողմից քննությանը մասնակցելու մտադրության վերաբերյալ դիմումը գրանցվելու օրվանից 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում:

Գաղտնի տեղեկությունը Հանձնաժողով ներկայացնող շահագրգիռ կողմերը ներկայացնում են նաև այդպիսի տեղեկության ոչ գաղտնի տարբերակը:

Ոչ գաղտնի տարբերակը պետք է պարունակի գաղտնի տեղեկության էությունը հասկանալու համար անհրաժեշտ մանրամասն տեղեկություններ:

2. Պատասխանատու դեպարտամենտն իրավունք ունի շահագրգիռ կողմից պահանջելու քննությունն անցկացնելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկույթ: Շահագրգիռ կողմի կողմից նշված տեղեկույթի տրամադրման ժամկետը չի կարող գերազանցել Հանձնաժողովի համապատասխան հարցումը նրա ստանալու օրվանից 15 օրացուցային օրը:

Հարցումը համարվում է ստացված՝ այն շահագրգիռ կողմին փոստային կապով ուղարկելու օրվանից 7 օրացուցային օր հետո:

Նշված ժամկետը լրանալուց հետո շահագրգիռ կողմի ներկայացրած լրացուցիչ տեղեկույթը կարող է հաշվի չառնվել պատասխանատու դեպարտամենտի կողմից:

Շահագրգիռ կողմի՝ հիմնավորված և գրավոր շարադրված խնդրանքի հիման վրա պատասխանատու դեպարտամենտը լրացուցիչ տեղեկույթ ներկայացնելու ժամկետը կարող է երկարաձգել 30 օրացուցային օրով:

3. Քննության ընթացքում Հանձնաժողովը շահագրգիռ կողմերին հնարավորություն է ընձեռում իրենց հարցման հիման վրա ծանոթանալու քննության առարկայի հետ կապված

տեղեկությոն (բացի գաղտնի տեղեկությոնց):

Հոդված 20

Հատուկ սուբսիդիա տրամադրելու հետևանքով անդամ պետության ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ նյութական վնաս հասցնելու վտանգի կամ անդամ պետության շահերի կոպիտ ոտնահարման որոշումը

1. Սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը որոշվում է փաստացի սուբսիդավորվող ապրանքի ծավալի և դիմումատու պետության շուկայում նույնանման ապրանքի գնի ու ազգային տնտեսության ճյուղի վրա այդ ներմուծման ազդեցության վերլուծության արդյունքների հիման վրա:

2. Ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը կամ ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայությունը որոշելու նպատակով տեղեկությունների վերլուծության ժամանակահատվածը սահմանում է Հանձնաժողովը, և այն չի կարող լինել դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 3 տարուց պակաս:

3. Փաստացի սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ծավալը վերլուծելիս որոշվում է, թե արդյո՞ք տեղի է ունեցել սուբսիդավորվող ապրանքի ներմուծման էական աճ (բացարձակ ցուցանիշներով՝ դիմումատու պետությունում նույնանման ապրանքի արտադրության կամ սպառման հետ համեմատած):

Դիմումատու պետության շուկայում նույնանման ապրանքի գների վրա սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ազդեցությունը վերլուծելիս որոշվում է՝

արդյո՞ք սուբսիդավորվող ապրանքի գները զգալիորեն ցածր են եղել դիմումատու պետության շուկայում նույնանման ապրանքի գներից.

արդյո՞ք սուբսիդավորվող ապրանքի ներմուծումը հանգեցրել է դիմումատու պետության շուկայում նույնանման ապրանքի գների զգալի իջեցման.

արդյո՞ք սուբսիդավորվող ապրանքի ներմուծումը խոչընդոտել է դիմումատու պետության շուկայում նույնանման ապրանքի գների աճը, որը տեղի կունենար այդ ներմուծման բացակայության դեպքում:

Ազգային տնտեսության ճյուղի վրա սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ազդեցության վերլուծությունը ներառում է բոլոր այն տնտեսական գործոնների գնահատումը, որոնք առնչություն ունեն ազգային տնտեսության ճյուղի վիճակին, այդ թվում՝

ապրանքի արտադրության, վաճառքի, ազգային շուկայում ապրանքի բաժինը, շահույթի, արտադրողականության, ներգրավված ներդրումներից կամ արտադրական հզորությունների օգտագործումից ստացված եկամտի՝ տեղի ունեցած կամ հետագայում հնարավոր կրճատումը.

դիմումատու պետության շուկայում նույնանման ապրանքի գների վրա ազդող գործոնները.

դրամական հոսքերի շարժի, ապրանքի պաշարների, զբաղվածության մակարդակի, աշխատավարձի, արտադրության աճի տեմպերի և ներդրումներ ներգրավելու հնարավորության վրա՝ տեղի ունեցած կամ հետագայում հնարավոր բացասական ազդեցությունը:

4. Ազգային տնտեսության ճյուղի վրա սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ազդեցությունը գնահատվում է դիմումատու պետությունում նույնանման ապրանքի արտադրության մասով, եթե առկա տվյալները թույլ են տալիս առանձնացնելու այդ անդամ պետությունում նույնանման ապրանքի արտադրությունն այնպիսի չափանիշների հիման վրա, ինչպիսիք են արտադրական գործընթացը, ապրանքի վաճառքը դրա արտադրողների կողմից և շահույթը:

Այն դեպքում, երբ ունեցած տվյալներով հնարավոր չէ առանձնացնել նույնանման ապրանքի արտադրությունը, սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ազդեցությունն ազգային տնտեսության ճյուղի վրա գնահատվում է ապրանքների այն ամենափոքր խմբի արտադրության կամ անվանացանկի մասով, որոնք ներառում են նույնանման ապրանք, և որոնց վերաբերյալ առկա են անհրաժեշտ տվյալներ:

5. Սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգը որոշելիս Հանձնաժողովը հաշվի է առնում առկա բոլոր գործոնները, այդ թվում՝ հետևյալ գործոնները.

սուբսիդիայի (սուբսիդիաների) բնույթը, չափը և առևտրի վրա դրա (դրանց) հնարավոր ազդեցությունը.

սուբսիդավորվող ապրանքի ներմուծման աճի տեմպերը, որոնք վկայում են այդ ներմուծման ծավալի հետագա ավելացման իրական հնարավորության մասին.

սուբսիդավորող անդամ պետությունում սուբսիդավորվող ապրանք արտադրողների համար այլ անդամ պետությունների տարածքում սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ծավալներն ավելացնելու բավարար հնարավորությունների առկայությունը կամ այդ ներմուծման ծավալներն ավելացնելու վտանգը.

սուբսիդավորվող ապրանքի գների մակարդակը, եթե գների այդ մակարդակը կարող է հանգեցնել դիմումատու պետության շուկայում նույնանման ապրանքի գնի իջեցման կամ զսպման և սուբսիդավորվող ապրանքի պահանջարկի հետագա աճի.

արտադրողի մոտ սուբսիդավորվող ապրանքի պաշարները:

Ընդ որում՝ նշված գործոնները չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգը որոշելու համար:

6. Ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության մասին որոշում ընդունվում է այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործոնների վերլուծության արդյունքների հիման վրա անցկացվող ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ դիմումատու պետության տարածք սուբսիդավորվող ապրանքի ներմուծումը շարունակելը և այդ ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին վնաս հասցնելը անխուսափելի են:

7. Սուբսիդավորող անդամ պետության կամ մեկ այլ անդամ պետության շուկայից նույնանման ապրանքը դուրս մղելու կամ սուբսիդավորող անդամ պետության տարածք նույնանման ապրանքի ներմուծման աճը զսպելու կամ այլ անդամ պետության տարածք նույնանման ապրանքի արտահանման աճը զսպելու փաստը հաստատվում է այն դեպքում, երբ ապացուցված է, որ սուբսիդավորող անդամ պետության շուկայում կամ մեկ այլ անդամ պետության շուկայում նույնանման ապրանքի մասնաբաժինը սուբսիդավորվող ապրանքի նկատմամբ անբարենպաստ փոփոխության է ենթարկվել: Նշված փաստը հաստատվում է այնպիսի ժամանակահատվածում, որը բավարար է համապատասխան ապրանքի շուկայի զարգացումների հստակ միտումներն ապացուցելու համար, և որը սովորական պայմաններում պետք է լինի առնվազն 1 տարի:

8. Սուբսիդավորող անդամ պետության շուկայում կամ մեկ այլ անդամ պետության

շուկայում նույնանման ապրանքի մասնաբաժնի անբարենպաստ փոփոխությունը ներառում է հետևյալ իրավիճակներից մեկը.

1) սուբսիդավորվող ապրանքի շուկայական մասնաբաժինը մեծանում է.

2) սուբսիդավորվող ապրանքի շուկայական մասնաբաժինը մնում է անփոփոխ այնպիսի հանգամանքներում, որոնց դեպքում հատուկ սուբսիդիա չլինելու պարագայում այն պետք է նվազեր.

3) սուբսիդավորվող ապրանքի շուկայական մասնաբաժինը փոքրանում է, սակայն ավելի դանդաղ տեմպերով, քան դա տեղի կունենար հատուկ սուբսիդիայի բացակայության պարագայում:

9. Գների իջեցումը որոշվում է համապատասխան շուկայում սուբսիդավորվող ապրանքի գներն այն ապրանքի գների հետ համադրելու միջոցով, որի արտադրության, փոխադրման կամ ցանկացած անդամ պետության տարածք արտահանման ժամանակ չի կիրառվել հատուկ սուբսիդիա: Գների համադրումը կատարվում է առևտրի միևնույն մակարդակի վրա և համեմատելի ժամանակահատվածներում: Գների համադրման ընթացքում հաշվի է առնվում համադրելիության վրա ազդող ցանկացած գործոն: Այն դեպքում, երբ գների նշված համադրումը հնարավոր չէ կատարել, գների իջեցման առկայությունը կարող է պարզվել արտահանման միջին գների հիման վրա:

10. Անդամ պետության շահերի կոպիտ ոտնահարման փաստը չի կարող հաստատվել համապատասխան ժամանակահատվածի ընթացքում՝ հետևյալ հանգամանքներից որևէ մեկի առկայության դեպքում.

1) շահերի կոպիտ ոտնահարման փաստը հաստատատող անդամ պետության տարածքից ապրանքն արտահանելու արգելքի կամ սահմանափակումների առկայություն կամ այդ պետության տարածքից ապրանքը մեկ այլ անդամ պետության շուկա ներմուծելու արգելքի կամ սահմանափակումների առկայություն.

2) նույնանման ապրանք ներմուծող և այդ ապրանքի գծով առևտրի մենաշնորհ ունեցող կամ այդ ապրանքի պետական առևտուր իրականացնող անդամ պետության լիազորված մարմնի կողմից այնպիսի որոշման ընդունում, որի համաձայն՝ շահերի կոպիտ ոտնահարման փաստը հաստատող անդամ պետության տարածքից ապրանքի ներմուծումը ոչ առևտրային պատճառներով վերաուղղվում է.

3) տարերային աղետներ, գործադուլներ, տրանսպորտային խափանումներ կամ այլ ֆորսմաժորային իրավիճակներ, որոնք խիստ բացասական ազդեցություն են ունենում շահերի կոպիտ ոտնահարման փաստը հաստատող անդամ պետության տարածքից արտահանելու համար նախատեսված ապրանքի արտադրության, որակի, քանակի կամ զնի վրա.

4) շահերի կոպիտ ոտնահարման փաստը հաստատող անդամ պետության տարածքից ապրանքի արտահանումը սահմանափակող պայմանավորվածությունների առկայություն.

5) շահերի կոպիտ ոտնահարման փաստը հաստատող անդամ պետության տարածքից արդյունաբերական ապրանքն արտահանելու հնարավորության կամավոր կրճատում (ներառյալ այն իրավիճակը, երբ այդ անդամ պետության տնտեսավարող սուբյեկտները նույնանման ապրանքի արտահանումն ինքնուրույն կերպով վերաուղղել են դեպի նոր շուկաներ).

6) այն անդամ պետությունում ընդունված ստանդարտներին և (կամ) վարչական մյուս պահանջներին անհամապատասխանություն, որի տարածք ներմուծվում է ապրանքը:

11. Սուբսիդավորվող ապրանքի ներմուծման և ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայության մասին եզրահանգումը պետք է հիմնված լինի քննության հետ կապված և Հանձնաժողովի տրամադրության տակ գտնվող բոլոր ապացույցների ու տեղեկությունների վերլուծության վրա:

12. Պատասխանատու դեպարտամենտը քննություն կատարելու ընթացքում, սուբսիդավորվող ապրանքի ներմուծումից բացի, վերլուծում է նաև այլ հայտնի գործոններ, որոնց հետևանքով միևնույն ժամանակահատվածում ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս է հասցվում:

Հոդված 21

Քննության արդյունքների հիման վրա որոշում ընդունելը

1. Պատասխանատու դեպարտամենտը քննության արդյունքների հիման վրա նախապատրաստում է հետևյալ եզրակացություններից մեկը.

Եզրակացություն այլ անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիա տրամադրվելու հետևանքով դիմումատու պետության ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական

վնասի, ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության կամ դիմումատու պետության շահերի կոպիտ ոտնահարման մասին:

Եզրակացություն այլ անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիա տրամադրելու հետևանքով դիմումատու պետության ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնաս, ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգ կամ դիմումատու պետության շահերի կոպիտ ոտնահարում չլինելու մասին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված եզրակացությունն ստորագրվում է պատասխանատու դեպարտամենտի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կողմից, հաստատվում է Հանձնաժողովի կոլեգիայի՝ արդյունաբերության հարցերով իրավասու անդամի կողմից և ներառվում է Հանձնաժողովի կոլեգիայի նիստում ուսումնասիրման համար նախապատրաստված փաստաթղթերի և նյութերի փաթեթում:

3. Սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ նշված եզրակացության հիման վրա՝ քննության արդյունքներով Հանձնաժողովի կոլեգիան կարող է որոշում կայացնել այն հատուկ սուբսիդիայի վերացման կամ սահմանված ժամկետում դրա տրամադրման և (կամ) օգտագործման պայմանների, կարգի փոփոխության մասին, որը հանգեցնում է դիմումատու պետության ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու, ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի կամ նրա շահերի կոպիտ ոտնահարման:

Այն դեպքում, երբ անդամ պետությունը նշում է, որ քննության ընթացքում իր կողմից ուղարկվող տեղեկույթը սահմանափակ տարածման տեղեկույթ է, Հանձնաժողովի՝ այդ տեղեկույթի օգտագործմամբ անցկացվող քննության արդյունքների հիման վրա որոշումները (որոշումների նախագծերը) հրապարակվում են՝ հաշվի առնելով Պայմանագրի 111-րդ հոդվածը:

4. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածին համապատասխան անցկացվող քննության արդյունքներով Հանձնաժողովը հաստատում է որևէ անդամ պետության ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի, ազգային տնտեսությանը նյութական վնաս հասցնելու վտանգի առկայությունը կամ այլ անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիայի տրամադրման հետևանքով դիմումատու պետության շահերի կոպիտ ոտնահարումը, այդ անդամ պետության լիազորված մարմինը կարող է սուբսիդավորող անդամ պետության լիազորված մարմնին ուղարկել դիմում փոխհատուցման միջոցի կիրառման մասին՝ բացառությամբ համաձայնեցված հատուկ սուբսիդիաների:

Համաձայնեցված հատուկ սուբսիդիաների առնչությամբ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված որոշումն ընդունվելու դեպքում սուբսիդավորող անդամ պետության լիազորված մարմինն այդ որոշումն ընդունելու օրվանից դադարեցնում է նշված սուբսիդիաների տրամադրումը:

Փոխհատուցման միջոցի ներմուծումն իրականացվում է Արձանագրությանը համապատասխան:

5. Հանձնաժողովի կոլեգիան չի ընդունում սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված որոշումը, եթե քննության ավարտից հետո և որոշումն ընդունելուց առաջ քննությանը մասնակցող անդամ պետությունները ձեռք են բերել պայմանավորվածություն՝ հաշվի առնելով Արձանագրության 6-րդ կետի հինգերորդ պարբերության դրույթները:

6. Եթե այն անդամ պետությունը, որի առնչությամբ ընդունվել է Հանձնաժողովի կոլեգիայի՝ սույն հոդվածի 3-րդ կետում նշված որոշումը, չի կատարում այն, ապա մյուս անդամ պետություններն իրավունք ունեն դիմելու Միության դատարան:

Հոդված 22

Գաղտնի տեղեկույթը

Այն տեղեկույթի առնչությամբ, որն անդամ պետությունը տրամադրել է Հանձնաժողովին սույն Համաձայնագրի իրականացման շրջանակներում, և որը, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, համարվում է գաղտնի (այդ թվում՝ առևտրային, հարկային և այլ գաղտնի տեղեկույթը), Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ապահովվում է պաշտպանության պատշաճ մակարդակ:

V. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 23

Լիազորված մարմինների մասին տեղեկույթը

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են լիազորված մարմինների մասին:

Անդամ պետություններն ապահովում են լիազորված մարմինների մասին Հանձնաժողովին ուղարկվող տեղեկույթի թարմացումը:

Հոդված 24

Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են Պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 25

Փոփոխություններ կատարելը

Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կծնակերպվեն առանձին արձանագրություններով և կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 26

Համաձայնագրի ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում անդամ պետությունների կողմից սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է և կազմում է Միության իրավունքի մաս:

Կատարված է Կազան քաղաքում 2017 թվականի մայիսի 26-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետության կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից	Բելառուսի Հանրապետության կողմից	Ղազախստանի Հանրապետության կողմից	Ղրղզստանի Հանրապետության կողմից	Ռուսաստանի Դաշնության կողմից
--	--	---	--	---